ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 405
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքը (Աղավնավանք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Դիլիջան համայնքի (Աղավնավանք բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքը (Աղավնավանք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Դիլիջան համայնքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի (Աղավնավանք բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-007-0104-0027 կադաստրային ծածկագրով 0.00746 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	11-007-0104-0027 կադաստրային ծածկագրով 0.00746 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կապի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Դիլիջան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Աղավնավանք բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի (Աղավնավանք բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ.Դավթյան

Երևան, «17» «նոյեմբերի» 2023 թ.